


տակարարէ. «Շարժում»ը «Մշակ» թերթի հոգով լայն կը տեսնէ, իր մէջ անպակաս են զեղեցիկ առաջնորդող յօդուածներ. «Իւրաւունք»ը լուրջ լրագրի օգտակար ուղղութիւն մ'ունի և աւելի խաղաղ յօդովորական. այս վերջին երկու թերթերն՝ Թրքահայ, Ռուսահայ և Պարսկահայ հասարակութեանց մասին, շատ անգամ շահեկան և ուշադրութիւն թողնող թերթերն են և ազգային բռնիկներ ալ կը հրատարակեն: Ընթերցողն որչ կը տեսնէ, որ այսպիսի ուղղութիւն մը ունեցող թերթեր հաւանական է որ հայ գաղութին վրայ շատ լաւ ազդեցութիւն կրնան թողուլ:

Մեր այսքան ի մէջ բերած օրինակներէն զիւրին է եզրակացընել թէ հայ գաղութը ուր աւելի կարող է պահել իր ազգութիւնը, և ինչ կերպով և միջոցներով կրնայ հաստատուիմալ իր Հայ անուն:

Երբ ճակատագիրը հայուն վրայ կը ծանրանայ, կը ստիպէ թողուլ իր ծննդավայրը, գաղթել, աստանդական, թափառական կենցաղ մը վարել: Գաղթականութեան պատմութիւնը օրինակ թող լինի, որ հայը մասնաւոր ուր նա սակաւութիւն է, կարող չէ ապրիլ մեծ պետութեան մը մէջ, և չի ձուլուիլ անոր հետ. հայը կարող չէ հայ մնալ ուր գաւառաբնակութիւնը ազգու կերպով ի գործ կը գրուի: Հայը կեանք կ'անուս, կը գարգանայ նիւթապէս և բարոյապէս, եթէ գարգանայ նիւթապէս կրօնական և բարոյական կաշկանդումէ զերծ համեստ տէրութեան մը մէջ. հոն իր հայկական տաճարը և մամուլը կը մոխրաբերն կը կազմուին զինքը և մոռցընել չեն տար հայրենեաց ամենէն բարձր յիշատակները, խոր վերապը, նուիրական Սարը, Շառաբշանի վարդերը, և զիւրազնեբարձ Պուլպուլը:

Եւ այդ ամենով Հայը Հայ է ամէն տեղ:

Հ. Ս. ԵՐԵՎԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՏԵՍՈՒԹԻՒՆ Ս. ԵՓՐԵՄԻ

ԿՏԱԿԻ ՎԱԽԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱՍՈՐԱԿԱՆ եկեղեցին է մին ի հնագոյն եկեղեցեաց, որոյ մէջ փայլեր են թէ պէտեւ գուցէ սակաւութիւն, բայց մեծ համաճարք, յոր առաջնակարգ կրնանք համարել զճգնազգեաց Սուրբն Եփրեմ խորին աւտորին, մեր մասնապրութեան մէջ ծանօթագոյն իր գրուածոց սոկեղէն թարգմանութեամբ: Այլ իր այդ գրուածոց մէջ կայ տալաւածանօթ կէտ մը. Սրբոյ վերջին կտակն, որ թէպէտ իբրեւ կաթիլ մը ի գույլ է, սակայն վերջինն է զեղեցիկ ու գեղացուն, ինչպէս վերջին կաթիլ ամանային բաղջը անձրեւին որ կ'իջնէ ու կը թափի նորաթիթի ծաղկան վրայ:

Ահաւասիկ հետեւեալն է Սրբոյն Եփրեմի կենսազրաց մեղի աւանդածն՝ այդ կենսաբուլի աղբիւրէն ելած վերջին սիրոյ կաթիլն կամ կտակին վրայ, և անոր համառոտութիւնը:

Ս. Եփրեմ Եփեսոյ սոթի ատեն աղբասները կերակրելն ետքը կը գտնայ իր խղիկը և մէկ ամէն կը հիւանդանայ: Սուրբն կը զգայ իր սուր և շնչոյ սպառիլն, կը զգայ որ այլ ես քանի մը օր հաղիւ ունի աշխարհէն վրայ օթիլու, վասն զի իր կենաց լալտաբեր առկայծեր է, կը կանչէ հաւատարիմ և ձեռատուն աշակերտքը՝ անոնց իր վերջին ուղղոյն տալու: Այդ մահադոյ լուրը վայրկեանէ վայրկեան արձագանգի մը պէս կրկնուելով կը տարածուի ամբողջ քաղաքին մէջ. Եղեսացիք հաղիւ իրենց հացը գտած՝ այժմ հաց տուողը կը կորսնցընեն. ամէնքը խուսն բազմութեամբ կը զիմն հոն՝ ուր որ

պատկած էր իրենց բարերարը, մահուան բռանց մէջ ճնշուած:

Սուրբը կը բանայ բերանը և խոնարհ ու երկիւղած սրտով մը և հոգով կը խօսի ու կ'աւանդէ իր կտակը որ վերջին ամսոյն մէջ շարադրած կը համարուի. «Ես Եփրեմ մեռածնիմ, զիտուն լիցի ձեզ արք Եփեսոյ... վնայ ինձ, պակասեցին ամբ կենաց իմոց... մերձեցան ընկզմիչք նաւին իմոյ». ինքն կու լայ իր անարժանութիւնն և յանցանքները և յարատաւս կը յորդորէ ներկայ եղողները «լացէք զիս եղբարք» իմ, զի ցուերով և արտամութեամբ անցաւ կեանքս «վանն զի վարկանէի և լցի զիամն իմ» անոր համար եկաւ հասաւ ու պատեց զիս որոգայթն զոր չէի զիտեր և պահանջողք որք կը ձգեն տանին «զիս յերկիր մարդկան և տեղի զոր ոչ զեաւէի»: Ո՛րչափ Ս. Եփրեմ իր կտակին սկիզբնեմն և այս մասերուն մէջ կը յիշեցնէ մեզ, մեր հանգստեան շարահանաց երզին գաղափարն՝ որ Եզեկիա օրհասական թագաւորին հողեշունչ հառաչանաց վրայ կազապարուած է: Եւ իրաւցնէ ինչ զեղեցիկ նմանութիւն երկուքին մէջ, կարծես երկուքն ալ իրարմէ կամ նոյն աղբիւրէ բղկած կ'երզին և շատ տխուր բառերով կը բացատրեն իրենց սրտերուն զգացմունքը, մին մահուան անկողինէ՛ն՝ միւսն զոցուած գաղաղէն:

Բայց ինչպէս վերջնոյս հնարողն, նոյնպէս և առաջնոյն յօրինողն Ս. Եփրեմ՝ չյուսահատիբ բոլորովին արտամութեամբ և ոչ զունկընդիրս կը թաղէ անել թաղծութեան մէջ, այլ երբ տխուր բառերով և զգացմամբն կը ճնշուի իր սիրան և կը ճնշէ այլոցն, աչքը վեր բարձրացուցած կը զօշէ առ Փրկիչն. «Աղաչեմ զքեզ իրկիչ... մի զիս ի նեղելն իմում՝ թշուառացուցաներ»: Կ'օրհնէ և ի մաստանոց բաղաբն և մայր Եփեսիան որ օրհնուեցաւ ի Քրիստոսէ. «յորժամ թուղթ առաքեաց Աբղարսոս որ զայս բաղաբը շինեաց... (և) աղաչէր զնա ասելով, լուայ զամենայն ի բէն զզորձեցեալսդ և որքան կրեցեր յանար-

զողացդ հրէից, եկ այսր և բնակեա՛ ընդ մեզ քանդի ունիմ՝ զայս փորք բաղաբ որ բաւական է ինձ և քեզ»: Կ'օրհնէ և իր աշակերանները առանձին առանձին և կը պատուիրէ անոնց շնորհիլ զինքը հասարակաց կամ պատուաւոր զերեզմանի մէջ կամ պաճուածեալ հանդերձիւր, «այլ ընդ պանդուխտս» և «զգետաւ իմում մեկնոցակաւ զիջիք զիս». մի ներբողիւք պատուել զինքն և մի ինկիօր կամ մեմկողնօր թաղել. և կը սպանայ ևս թէ «որ առաջի իմ ճրպայ տարցի հրով կիզցի կողն նորա», զի այլ ամէնը՝ ճրպայ և խունի և պատիւ մեծամեծաց և Աստուծոյ տաճարաց միայն կը վայլեն: Այսպէս պատուիրելով կը խրատէ միանգամայն զանոնք և կը վարդապետէ անոնց ինչ որ պէտք էր ժամանակին և կը կատարէ իւր կտակն՝ ըսելով «Փութեացուք զանձինս կատարեալս բարի զործովք հաստատել», և կամ ըստ այլոց՝ կը լինցնէ ողջունելով մահուան հրեշտակն որ զհողիներ կը բաժնէ ի մարմնոց և կը պահէ «յեւթարանչիւր կայանս մինչև յօրն յարութեան»:

Այս է ահաւասիկ համառօտիւ՝ Սրբոյս կտակի նիւթն ու պատմութիւնը: — Իսկ զայնով կտակիս թարգմանութեանց, յայտնի է թէ իր մահուանն քիչ վերջ թարգմանուած է յունարէն իբ վործերուն հետ և Ս. Գրեգոր Եւեսացին ունէր իր ձեռքը զայն՝ զՍ. Եփրեմ ներբողիւր առնէ, ինչպէս որ վերջին ալ պիտի տեսնենք:

Վեշտառաներող զարէն սկսեալ ստորերէնի և մանաւանդ յունականի վրայն՝ այլ և այլ թարգմանութեամբք և ծանօթութեամբք հրատարակուած է լատիներէն լեզուով, որոց մէջ նշանաւորքն են Ռեյբուլէքիւր¹ և Աոսեմանիէիւր², ուսկից ինչպէս կ'ըսէ Հ. Մարթէն, կը բաղեն, կամ ճիշդ անոր ազացոյցները մէջ կը բերեն ամենայն ևսրօպացի բնագաբար որ Ս. Եփրեմի կտակին յիշատակութիւնը կ'ընեն:

Իսկ հայերէն թարգմանութեան մասին ար-

1. S. Ephraem syri, Rabulae aliorumque opera selecta. Oxonii, 1865.

2. S. Ephraem syri opera graeco-lat., Romae 1745.

զէն ծանօթ է մեզ ամենուս որ Ս. Եփրեմի գործերուն իբր ամբողջական թարգմանութիւն եղած է Հինգերորդ դարուն, թերեւս ճիշդ Ս. Գրքին հետ և անկէ վերջ, Բայց սակայն այդ չի բնագրասեր զմեզ հաւանելու թէ կտակն ալ նոյն ասան թարգմանուած բլլայ և ոչ վերջէն՝ ինչպէս եղած են իր մի քանի գործերն, զոր Մեծ. Հ. Գ. Վ. Չարբհանաւեան Էջմիածնի ցանկէն բազելով իր Հայկական թարգմանութեանց Մասնաւորարանի¹ մէջ կը յիշէ այսպէս. « Ճարք Եփրեմ խորաւոյն թարգմանեալք ի Գեորգէ ումննէ է Գեառնէ քաղաքն » Կիլիկիացոց ատեն : Ուրեմն, ի սէր համառօտութեան՝ ի բաց թողլով ուսումնասիրաց ընդարձակ բնութիւնն ու հետազօտութիւնքը և այս փաստը միայն ու նենայով ձեռքերնիս և զիտնալով ալ որ Ս. Եփրեմի գործերն ամբողջ չեն թարգմանուած է նմին ժամանակի, յանգնութիւն չենք համարել կարծելն թէ վերջէն թարգմանուած է կտակ և հաւանականաբար՝ երբ Հարանց վարքն ձեւացաւ և կամ անոր մտերուն հետ, իբր խրատ միանձանց, ունեայլով իրեն բնագիր յոյն թարգմանութիւնն :

Եւ յերտել մեր ոյզ բաւժը ապացուցանելու համար բառական է միայն հայերէն թարգմանութիւնը բազդատել յոյնին և ասորւոյն հետ, ուր պիտի տեսնե՞ք նախ որ ասորերէն և յունարէնը սկիզբէն մինչև վերջը բոլորովին կը տարբերին իրարմէ. « չէք ինչ նմանութիւն ». կարծես երկուքն ալ իրարմէ անկախ երկու բնագիրներ են. երկրորդ պիտի նկատենք որ հայերէնը յոյն բնագրին վրայէն թարգմանուած է և ոչ ասորին՝ որ կարծեմ թէ ի շնորհս ասորի յանդուգն ձեռքերու՝ ընագրի շնորհքէն դուրս եղած է այժմ. հոս տեսնենք բազմնուս ստուգութիւնը օրինակով մը կտակի սկիզբէն բանի մը տող բազդատելով : Ուր մինչդեռ ասորին կը սկսի.

Ես Եփրեմ մեռանիս և գրեմ զկտակ զի

ամենեցուն բոլոյց յիշատակ յայնցանէ զոր ունիս, զի գեր վասն բանից իմոց գշիշատակ իմ ամենիցեն որ զիս ձանկակն :

Գրեթէ բոլորովին տարբեր ոճով մը յոյնը և հայը միաբան կը գնեն այսպէս.

Ես Եփրեմ մեռանիս, յայնի յիցի ձեզ արք Եղեսացիք, կտակ ձեզ բոլորս օրինակ յիշատակի-վարդապետութեան յայնցանէ որ յիս է շնորհն և պարգեան, որպէս զի գշիշատակ բանից իմոց ունեւոյլ ամենիցք ինձ յիշատակ, որ գիտեք և ձանաչեք զիս :

Եւ այսպէս յար և նման յոյնին կը շարունակուի հայն հետնալով յասորւոյն :

Գարձեալ կտակ թերեւս ոչ այնչափ իր զեղեցիկութեան, որչափ հետաքրքրական բլլալուն և Ս. Հօր մ'անուն կրեալն համար, թարգմանուած է և Սլաւ լեզուով Ս. Եփրեմի սրիշ գործոց հետ : Առաջին անգամ այդ սլաւ թարգմանիչն Գոլիուսն եղաւ որ տարակոյս հանեց անոր հարապատութեան վրայ բնելով թէ ասորի վարդապետի սճն չի տեսնուիք անոր մէջ : Սլաւ թարգմանիչն չմտաց ասանձին, զտաւ իրեն կարծեաց հետեւողներ և համախոհներ քանի մը բանասէրք՝ յորս նշանաւոր և ջերմն եղաւ իննեակ տարիներ տալ՝ Rubens Duval² իւր Եղեցիոյ պատմութեան մէջ. իսկ ընդ հակառակն բանասիրաց համադրոյնք և Ս. Եփրեմի գործոց վրայ երկայն ատեն զբազուք ինչպէս են Աստեմանի, Վասիս³, Պարմինոս⁴, և Փապրիկիտոս⁵ և ի նորոց Հ. Մարթէն (P. Martin) և մտաւանդ Լամի (Lamy) որ երկայն տարիներ Ս. Եփրեմի գրուածներով զբաղեցաւ և անոր կցորցնեցուն և ճատերուն ուսումնասիրութիւնը հրատարակեց հատորներով, պահպանողական զիւրք մը բունելով միշտ պաշտպանեցին հին աւանդութիւնը որ այս կտակը վաւերական գործ կը համարի ասորի Ս. Հօր :

Վերջերս ալ նոյն այդ Լամի 1897ին ի

1. Մասնաւորարան Հայկական թարգմանութեանց նախնեաց. (Էջ 460) Վիեննայի, 1889 :
 2. Histoire d'Edesse. Paris 1892, էջ 159.

3. Opera omnia S. Ephraem syri. Romae 1589-1598. 5 հատոր :
 4. Annales ad a. 378.
 5. Biblioth. gr., VIII, 230.

Պրիպորի եղած ժողովքին առթիւ հրատա-
րակեց Եփրեմի կտակին գաղղիերէն թարգ-
մանութիւնն հանդերձ երկայն և մանրագին
քննադատականով մը և լի տեղեկութեամբ,
ուսկից և մեկը օպտուելով այժմ՝ պիտի սկսինք
ցուցնել նաև կտակին հարադատութիւնը,
և որովհետեւ՝ յաւերածներ եղած են անոր
վրայ, երկրորդ յանդիր մը կ'ելլայ զիմացնիս՝
այն է որոշել յաւերած հատուածներն հա-
րազատ կտակէն:

Ս. Գրիգոր Նիւսացին որ ծնաւ, սնաւ և
ապրեցաւ ի չորրորդ դարու ժամանակակից
և ականառես Եփրեմի և հանդիսատես անոր
գործներուն և խօսքերուն՝ Եփրեմի կու տայ
այդ կտակը, քանի որ յետ անոր մահուան
զայն ներբողելու առեն, ըսածն աւելի ստոյգ
և զօրաւոր բնելու համար կտակէն քաղուած
ներ բնելով վկայութիւն կը բերէ իր Եփրե-
մի հարազատ խօսքեր: — Այսպէս կը խօսի
Նիւսացին. «Ոչ կարեմ այնպէս լուսադոյն
իմն ցուցանել ձեզ զոր ճգնիմն բայց առաջի
անկի ձեզ զբանն նորին իսկ սրբոյն», և
կը սկսի կտակին վկայութիւնը՝ որոնք բառ
առ բառ նոյն են այժմ՝ սնեցած յոյն կտակի
թարգմանութեան հետ: Ուրիշ տեղ մը դար-
ձեալ կ'ըսէ Ս. Եփրեմ «Ի վայրկեան կա-
նելոյ իւրոյ յերկինս երթող մեզ զբազոր բանքս
այսորքի որ ստուցանեն մեզ անինչատա-
ցութիւն. «Ոչ եղև Եփրեմի քտակ, ոչ մա-
խաղ, ոչ գառագան, ոչ արծաթ կամ ոսկի
և կամ այլ ինչ... քանզի ի բարի վարդա-
պետէն լուայ յաստուածային աւետարանէն
որ ասաց իւր աշակերտացն մի ինչ ստա-
նայք ի վերայ երկրի». քիչ վերջը գարձեալ
կ'ըսէ, Եփրեմ, «ի ժամա երթալոյ իւրոյ
յերջանիկ և յերկնային կեանս զնէք զպա-
տուերանս զայս խիստ, մի սք ի ձէնջ գո-
վեացէ զին կամ յարգեացէ եղբարք... մի
պատուք զմարմինն իմ երեւելի և պատուա-
կան պաճուճանօք, և մի ի շիրիմն ձեր թա-
ղէք զին զի բան ունիմ ընդ Աստուծոյ իմոյ
զի բնակեցուցիք զին ընդ օտարս» և ահա
այդ ամէնն այ բառ առ բառ կը գտնենք Ս.
Եփրեմի կտակին մէջ, և միայն հոն. իրեն
ուրիշ զրուածոց մէջ այս բաներուս յիշա-
տակութիւն մ'անգամ գտնելն անհնարին

եղած է մինչև ցայժմ: Արդ Ս. Գրիգոր խօ-
սեցաւ ներքոց Սրբոյն մեռնելէն քիչ վերջ
և զուցէ երկու երեք ամիս յետայ՝ երբ ըստ
անանուն կենսագրաց, հանեցին զինքը օ-
տարականաց գերեզմանատունէն ուր թաղեր
էին, իրեն կտակին պատուէրը կատարե-
լու համար, և հանդիսաւոր կերպով փոխա-
գրեցին ի շարս սրբական հայրապետաց
քաղաքին:

Ուտի Նիւսացին այլչափ պարագաներով
և հանգամանքներով ծանօթ է ժամանակա-
կից Սրբոյն Եփրեմի չէր կրնար չզխտնալ
կամ խարել և խարուել այնպիսի գործ և
խօսքեր տալով Եփրեմի սրբ իրեն չէին:
Գարձեալ և Մեծափրատուս կերպով մը կը
հաստատէ թէ՛ Նիւսացոյն ըսածին ճշմար-
տութիւնը և թէ՛ կտակին հարադատութիւնը
երբ կ'ըսէ (թէ) «Ս. Եփրեմի ամենամեծ
հարստութիւնն էր բան մը չունենալ, և կը
յաւելու թէ մենք զայս հաստատելու համար
սնինք իրեն՝ Եփրեմի վկայութիւնը իր բա-
ւերով՝ զոր արտասանեց իր մահուան ան-
կողմէ մէջ». և յառաջ կը բերէ ճիշդ Նիւ-
սացոյն յիշած կտակի խօսքերն: Այս եր-
կու տնհերքելի փաստերէն վերջ հարկ չկայ
կարծեմ յիշելու նաև Ս. Եփրեմի կենսա-
գրաց վկայութիւնները. բայց յիշենք միայն
և մեր Ներուս Լամբրոնացոյն վկայութիւնը:

Ներուս և Գրիգոր կը վիճեն պատարա-
զով ողորմութիւն տալու և քատասունքի
վրայ. Գրիգոր կը յաղթահարի Ներուսէն,
յանկարծ իբրև մեծ վկայութիւն մը կը յիշէ
ըսելով. «Նաև Եփրեմ թէպէտ և յամենայն
պատուց յետ մահուն հրաժարեաց, ոչ և
ի սմանէ» այսինքն պատարազ¹: Արդ այս
պատարազի յիշատակութիւնը Ս. Եփրեմի
միայն կտակին մէջ կը հանդիպենք, ուր
կ'ըսէ իր աշակերտացը «Թէ ըստ սովորու-
թեանն ձերում պատարագս յաղագս իմոյ
տկարութեան արժանի արարէք մատուցանել
յարժամ կատարեցի երեսուն օր»:

1. Սրբոյն Ներսէսի Լամբրոնացոյ խորհրդ-
գատութիւնը և կարգը Եկեղեցոյ (էջ 67), Վի-
նետի. 1847:

Կը մնայ մեզ այժմ որոշել թէ այդ կտա-
կին որուն երկայնութիւնը հազիւ թէ կրնայ
չափել հիւանդ մը բան թէ խօսել, ո՞ր մա-
սերն են հսկելարը Եփրեմին հարազատ և ո՞ր
մասերն անհարազատ: Գեռ չսկսած որոշու-
լու թիւննիս, նախ ակնարկ մը տանը թէ ընա-
զիր և թէ թարգմանութեանց ձեռագիրներուն
վրայ, որոնք առաջնորդ պիտի ըլլան մեզ,
մեր ձեռնարկութեանց մէջ:

Ասորի կամ բնագիր ձեռագիրներն.

Ժամանակն որ ամէն բան իր ճանկերուն
և երկայն շրջաններուն մէջ կը մաշեցնէ, չէ
ինչայսձ նաեւ Սրբոյս վերջին հառաչանաց
ձեռագիրներուն ալ: Հազիւ հինգ օրինակներ
անոնցմէ հասեր են մինչեւ առ մեզ և անոնք
ալ ոչ ազատ ժամանակին ճանկերուն աղ-
ղեցութիւնէն և յանդուգն գրիչներու աղաւաղ-
մունքէ և ոչ ալ անդրազգին հնութեամբը բան
գեթիներսրդ կամ ութներսրդ դարերն: Այդ
օրինակներէն մին կը պահուի ի գրատան
Հաւատաստիւս Ժողովի (Propaganda), իսկ
մնացած չորսերէն՝ սրբ բերուած են Նիտրոյ
ասորի հին վանքէ մը, մին կայ ի Վատի-
կան և ասոր վրայէն ըրած է Առեմանին իր
թարգմանութիւնը կցելով ասոր Հաւատաս-
տիւս Ժողովոյն ձեռագրին ասորեութիւնքը,
փիւս երեքն կը պահուին ի Լոնտրա բրիտա-
նական թանգարանը: Վերջնոցս մէջ ամե-
նէն կատարեալն և որուն ինչպէս կ'ըսէ Լամի-
կը պակի սկիզբն, գրուած է 7երորդ և կամ
ըստ Օվերպատի Տերորդ գարուն, իսկ ամենէն
հինն որ և այժմ միայն կտակի վերջերն
ունի, գրուած է 7երորդ դարուն:

Յունարէն ձեռագրեր մինչև 12 կտորի
կը հասնին և կը պահուին ի Վատիկան, ի
Վիեննա և ի Փարիզ և այլուր: ՅՐԵՄԻԱՅ
գտնուած յոյն օրինակն ասուած է հան-
1709ին, ինչպէս յառաջ ալ ըսինք՝ յունա-
բէններու վրայէն եղած են այլեւայլ լատին
թարգմանութիւնք և հրատարակութիւնք,
թարգմանութիւնք և հրատարակութիւնք է որ զեռ
միայն հայերէն թարգմանութիւնք է որ զեռ
ասպարուած չէ, թէպէտ և մեր վանքը ժա-
մանակին հիմն դրած է հրատարակութեան
հրատարակելով Ս. Եփրեմի գործերուն հետ,
կտակէն ունեցածնուս մէկ հատուած մը որ
կը պահուէր Գ. և ԺԳ. Ճառքնախորհրդու մէջ:

Իսկ թէ քանի՞ օրինակ կայ կտակէս հայ
թարգմանութեան՝ յայտնի չէ, թուի թէ ա-
սորերէնի բազմն ունեցեր է նաեւ հայերէնը:
Փնտռելով էջմիածնի Կարինեան ցանկին մէջ
յիշատակութիւն մը չգտայ, նոյնպէս և Վիեն-
նացոց ցանկին մէջ: Երուսաղէմէ և այլուր
անձանոթ են ինձ: Իսկ մենք ունինք Գ.
ԺԳ. և ԻԷ. Ճառքնախորհրդու մէջ վերայի-
շեալ տպուած հատուածն և ուրիշ 10 տողի
չափ հատուած մ'ալ Հարանց վարուց հին
թարգմանութեան Ա. օրինակին մէջ:

Ամբողջ օրինակ՝ մը միայն ունինք, վարք
Հարանցի հին թարգմանութեան Բ. օրինա-
կին մէջ. այս՝ Ս. Եփրեմի գործերու տպա-
գրութեան առեւ չկար: Հ. Ներսէս Սարգի-
սեան բերած է զայս ձեռագիր իր և Հ. Գրե-
գորի ի Հայաստան ուղեւորութեան առեւ:
Ուրիշ օրինակ մ'ալ որ այժմ չեմ գիտեր
ուր կը գտնուի, այսպիսի պատմութիւն մը
ունի՝ զոր քանի մը տողով նշանակուած
գտայ վերջին յիշած վարք Հարանցի առջևը:
Մեր բազմարդին Հ. Ազգերեանը ի Պոլսոս
կը հանդիպի վարք Հարանցի օրինակի մը,
կ'ուզէ օրինակի զայն և կը յաջողի ալ ձեռք
բերելու. բայց խեղճ ձեռունին չի հասնիր
փափաքին և ինչպէս աղլած կը մնայ երբ
ինչպէս կ'ըսէ «յանկարձ տէրն նորա ստի-
պով», յետո պահանջեաց» այս պատճառաւ
այսինքն «առ ի շնեքելոյ ժամանակին» հազիւ
կրցեր է զլեռակարգութիւնք և քանի մը ոճեր
բաղել յորս կան և Ս. Եփրեմի կտակին
զլեռակարգութիւնն և ոճերն:

Թողլով արդ ձեռագրաց օրինակներն, ան-
ցնինք քննելու անոնց պարունակութեան
մէջ Ս. Եփրեմի անհարազատ կամ կտակի
մասն չկազմող կտորներ, որոնց մէջ առաջին
գիտնացնիս կ'ելլէ նախ դիւահարի մը պատ-
մութիւնք. այս կտորը չունի և ոչ մի աղարի
ձեռագիր, միայն յոյն և հետեւաբար հայ
օրինակներն ունին, բայց անոնց մէջ ալ
այնպիսի կերպով մը գեռեղուած և ան-
ցուած է որ կը հասկցուի թէ կտակի մասն
չէ և ոչ Ս. Եփրեմի. վասն զի երբ հան կը
հասնի կտակն կ'ընդհատի և երբորդ անձ
մ'է որ կը սկիտ պատմել այդ դպրքը թէ,
երբ Եփրեմ այսպէս կը խօսեր յանկարձ

մարդ մը զիւսհարեցաւ և իր յանդանդը խտտովանելով, Սուրբն մէկէն ղինքը բժշկեց և սիրաւ նորէն իր խօսքը յառջ տանել:

Երկրորդ յաւելումնքն է Մովսէսի և կախարչներու վրայ երկայն ճառատանք մը. զայս միայն ասորի ձեռագիրքը ունին, բաց ի Հաւատաստիւիւ ժողովոյն ձեռագրէն. զիտունք սմանք և Աստեմանի թէպէտ կասակի մասն չեն համարիր զայս, բայց Ս. Եփրեմի ճառերուն մէկուն կտորն է կ'ըսեն: Երրորդ յաւելումնքն, որ նոյնպէս միայն ասորի ձեռագիրք ունին, է որթի մը տեսեան պատմութիւն. Ս. Եփրեմ մանկութեան ժամանակին տեսելը մը տեսեր է. որթ մը բուսած իր լեզուին վրայ, սրուն ուղեղոյնը կ'ուտէին ամենայն մարդիկ և չէր ըմնար, ի նշան իր ճառերուն և գործոց: Սոյս՝ ինչպէս և վերն յիշած Մովսէսին մասն, և իրեն յարակից կտորներն որ նոյնպէս կասակի մասն չեն, այնպիսի ճարտարութեամբ մը յաւելցուած են կասակի ետեւն որ կարծես թէ զեռ կտակն կը շարունակուի:

Ուայթ՝ բացարձակապէս մերժեց, այլ կտորը կասակի մասն համարելու: Ընդհանրապէս Աստեմանի և այլք և Լամի կտակի մասն համարեցան զայն, իրենց կարծեաց հիմն առնելով Գրիգոր Նիսացոյն ի Սուրբն Եփրեմ ճառին հետեւեալ տողերն. «Պատմեն թէ Եփրեմ ասեր զանձն զի աղայ ելով տեսանէր տեսիլ ինն խորհրդաւոր Տեսաներ որթ ստեղծացեալ ի լեզուի իւրում», և այլն: Ուտոի այս խօսքերէն բաշխելուամբ, մանաւանդ Լամի, այսպէս կը արամարանէ որթին պատմութիւնը կասակի մասն ըլլալը ցոյցնելու համար: Ուրեմն կ'ըսէ, ինչպէս տեսանք (Նիսացոյն խօսքէն) Ս. Եփրեմ ինքն է որ այս գեղքն կը պատմէ, արդ սրովհետեւ զայս որբիչ տեղ չենք զանք յիշատակուած բայց եթէ Եփրեմի կտակին մէջ որեմն անոր մասն է: Այս կարծիքս Լամի զեռ աւելի բացայայտ պաշտպաններ է, ինչպէս ինքն ալ կ'ըսէ, իր կցուորդք և Ճառք Ս. Եփրեմի ասորոյ ըստած հեղինակութեան մէջ:

Բայց մենք ալ կ'ըսենք որ՝ եթէ Լամի և այլք ուշագործիւն ընէին նախ Նիսացոյն խօսքին ուր որ կը «պատմեն» կ'ըսէ այս-

ինքն թէ ուրիշներէն բաժ է և ոչ թէ կարգացած որ ձեռքն ունեցած Եփրեմի կտակին մէջ, ուսկից այնքան բազումներ կ'ընէ նոյն ճառին մէջ զԵփրեմ՝ զուստեւու համար, և երկրորդ անգամ եթէ զեանային որ այլ կտորն ոչ միայն յոյն օրինակներն չունին այլ և հայն և հայ Յայտմաստքք, այլ տեսելքը ոչ թէ Եփրեմի կու տան այլ իր ծնողաց սրանք առաւօտը ելած, ամենուն կը պատմէին իրենց նորածին մանկան ասպազայն գուշակելով, անշուշտ կ'ըսեմ և ապահով եմ որ եթէ Լամի և այլք այս ուշագործիւնն ընէին և այս հանդամանքները զեանային, այնպէս պիտի չհակասակէին Ուայթի. և պիտի չհաստատէին ալ թէ այլ որթին պատմութիւնը Եփրեմի է և իր կտակին մասն:

Չորրորդ և վերջին յաւելումն է Լամ ըրտատեալ անունով աղջկան մը պատմութիւնը՝ որ լալով կը խնդրէ Ս. Եփրեմն որ ինքն շինէ անոր գագազին և Եփրեմ ալ կը հրամայէ թէ զնա՛ շինէ, և այլն: Թէպէտ և այս կտորն միայն և որ թէ՛ ասորի թէ՛ հայ և թէ՛ յոյն օրինակներն ունին, սակայն բանասէքք ամէնքն ալ զայս հաւատար կերտով կտակի մասն չեն համարիր և ինչպէս շարայարութիւնն ալ կը ցոյցնէ, կ'ըսեն թէ իր աշակերտքը վերջէն աւելցուցեր են վրան:

Արդի քննապատնեռու զիստար բար զայլ թակգութեանն, որով չեն նշուր այս կտակը Ս. Եփրեմի հարազատ գործ ընդունել՝ անոր չափազանց երկայնութիւնն է և մէջը ժամանակին և նիւթին անյարմար այլեպէլ մասեր գտնուելն: Արդ եթէ մի առ մի այսպէս յաւելումններն, մանաւանդ անոնք որ կը յայտնուին ասորի օրինակները յոյն օրինակաց հետ համեմատելով՝ զուրս ձգենք, և զուս կարծուած կտակն գրենք տառնձին, Աստեմանիին հետ տեսած տառնինն պիտի չբաշխեն թէ անկարելի է որ հոգեվարք հիւանդ մը կարգայ այջափ երկայն կտակն մը:

Հ. Վ. ՌՈՍՏՈՒՅԿ

